

Ռ.Մ. Խիզանցյան

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ

ԴՊՐՈՅՈՒՄ

Երևան 2011

Ռ.Մ. Խիզանցյան

ՄԱՐՄՆԱՄԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

ազատ վարժություններ

ակրոբատիկա

ցատկեր

(1 – 12-րդ դասարաններ)

ուսումնական ձեռնարկ

Չեղինակային հրատարակություն

Երևան 2011

Խիզանցյան Ռ.Մ.

Մարմնամարզությունը դպրոցում

(ազատ վարժություններ, ակրոբատիկական ցատկեր): Ուսումնական ձեռնարկ:

Չեղինակային հրատարակություն, 2011 - ... էջ:

Առաջին անգամ մայրենի լեզվով հրատարակվում է ուսումնական ձեռնարկ, որում մատչելի ձևով ներկայացված են «Ֆիզիկական կուլտուրա» առարկայում մարմնամարզության բաժնի երեք կարևորագույն միջոցները (ազատ վարժություններ, ակրոբատիկա ցատկեր): Աշխատանքը կարևորվում է նրանով, որ յուրօրինակ մոտեցումներ են մշակված այդ միջոցների ուսուցման, խմբային կատարման և գնահատման վերաբերյալ: Այն պլանավորված է դպրոցականների ողջ ուսումնառության տարիների համար:

Ձեռնարկը նախատեսված է ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի, մանկավարժական բուհերի ֆիզիկական դաստիարակության ֆակուլտետի ուսանողների, «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցիչների և աշակերտների համար:

Գրախոսներ՝

Թուլլատրված է հրատարակման ֆիզիկական կուլտուրայի հայկական պետական ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հանրակրթական դպրոցի «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի բարելավման կապակցությամբ մասնագետները փնտրում են նոր ուղիներ և մեթոդներ, որոնց հիմնական նպատակն է նպաստել աշակերտների շարժողական ակտիվությանը: Նոր ուղիներ փնտրելու և այն ժամանակակից դպրոցականների պահանջներին ու նպատակին ուղղորդելը՝ դա շարժողական ընդունակությունների բազմակողմանի մշակումն է, հնարավորինս կյանքում անհրաժեշտ շարժողական ընդունակությունների ձևավորումը և էլի շատ ընդունակությունների մշակումն և կատարելագործումը:

Ֆիզիկական կուլտուրայի այդ նոր ուղղությունը կարելի է դասել սպորտային ուղղվածությամբ «խմբային մարմնամարզության» տեսակին, որը վերջին տասնամյակում մեծ կիրառում է գտել Եվրոպական և Ռուսական հանրակրթական դպրոցների ծրագրերում:

Այն իր մեջ ընդգրկում է մարմնամարզական վարժությունների երեք խոշոր խումբ (միջոց)՝ ազատ վարժություններ, ակրոբատիկական վարժություններ և հենացատկեր:

Ազատ վարժությունները դպրոցականների մի խումբը կատարում է (բոլորը միասին) մարմնամարզության գորգի կամ հատակի (որը կարող է լինել 10X10մ հրապարակի) վրա: Ակրոբատիկական համակցությունները կատարվում են հարահոս՝ մեկը մյուսից հետո՝ անմիջապես ակրոբատիկական ցատկուղյակի կամ ներքնակների շարքի վրա:

Նույնանման կատարվում են հենացատկերը մարմնամարզական այծի կամ լայնույթամբ տեղադրված նժույգի վրայից: Ուսուցանվող բոլոր վարժությունները կատարվում են երաժշտության ուղեկցությամբ՝ որը կարող են ընտրել դպրոցականները:

Խմբային ազատ վարժությունները իրենցից ներկայացնում են ընդհանուր զարգացնող վարժություններից և ակրոբատիկական տարրերից բաղկացած համակցություններ, որոնց կատարումը աշակերտներից պահանջում են ոչ միայն համագործակցված շարժումների կատարում այլև ընտրված, համեմատաբար բարդ տարրերի տեխնիկապես ճշգրիտ յուրացումը:

Ազատ վարժությունների ճշգրիտ յուրացման և ընկալման համար ձեռնարկում տեքստի ձևով և նկարներով ներկայացվում են վարժությունների բովանդակությունը:

Ակրոբատիկական վարժությունները բաղկացած են երկու տարբեր համակցություններից, որի մեջ մտնում են դինամիկ բնույթի տարրեր՝ գլորումներ, գլուխկոնծիներ, շրջումներ, ցատկեր: Համակցությունը կատարվում է առանց կանգնելու և դադարի, տեմպի արագացմամբ և վարժության ավարտին վայրէջքով և սևեռելով այն:

Կատարելով հենացատկեր մարմնամարզական այծի (նժույգի) վրայից մասնակիցները պարտավոր են ցուցադրել ձեռքերով հրվելուց հետո բարձր և հեռու հետագծով ցատկեր և հաստատուն վայրէջք:

Չարկ ենք համարում նշելու, որ ձեռնարկում նկարագրված համալիրները և համակցությունները չեն արգելում ուսուցիչներին և աշակերտներին ստեղծագործելու, հակառակը, նպաստում են ստեղծագործաբար մոտենալ այդ գործընթացին և կազմել սեփական համալիրներ և համակցություններ:

Աշխատությունում ծավալուն բաժնեմաս է հատկացվել յուրացրած նյութի գնահատմանը, մրցումների կազմակերպմանը և անցկացմանը: Մրցավարության բնորոշ առանձնահատկություններից մեկն այն է, որ խմբին գնահատելիս ոչ միայն հաշվի է առնվում յուրաքանչյուրի կատարումը առանձին վերցրած, այլև համաձայնեցված՝ սինխրոն կատարումը ամբողջ ելույթի ընթացքում: Մրցումների մատչելիությունը տարբեր պատրաստության աշակերտների համար ապահովելիս հնարավորություն է տրվում մասնակցելու ինչպես մեկ, այնպես էլ երկու երեք ձևերից միաժամանակ:

Նման մեկնաբանումը կհեշտացնի ինչպես կատարված վարժության գնահատմանը, այնպես էլ մրցումները գրագետ և օբեկտիվ անցկացնելուն: Միևնույն ժամանակ առաջարկվող կանոնակարգը հնարավորություն կտա ֆիզիկական կուլտուրայի ուսուցչին կողմնորոշվելու և ճշգրիտ ուսուցանելու պահանջվող նյութը (կատարման որակը, ոճը, սինխրոնությունը և այլն):

Այսպես՝ ակրոբատիկական վարժություններում և մարմնամարզական ցատկերում մասնակիցները գնահատվում են յուրաքանչյուրն առանձին առանձին ամեն վարժության համար և խմբակային կատարման գնահատականը որոշվում է խմբի բոլոր մասնակիցների գնահատականների գումարով:

Յուրաքանչյուր ոչ ճշգրիտ կատարման համար հանվում է 10 բալանոց միավորներից 0.5 – ից 1.0 միավոր:

Ձեռնարկում մանրագին մեկնաբանվում են ուսուցչին օգնող մեթոդական նյութեր, որոնք հեշտացնում են ինչպես ուսուցման գործընթացը, այնպես էլ գնահատումը մարմնամարզության բազմամարտում: Գնահատման հիմքում ընկած է մրցավարական ծրագիրը, որը մշակվել և պարզեցվել է դարձնելով այն մատչելի 10 բալանոց համակարգով: Այն համապասխանում է «Ֆիզիկական կուլտուրա» առարկայի առաջադիմության ընթացիկ գնահատման նորմերին:

Ձեռնարկում ներկայացված են 1 – 12-րդ դասարանցիների ազատ վարժությունների, ցատկերի և ակրոբատիկայի ծրագրային նյութը:

Ազատ վարժությունները միանման են ինչպես տղաների այնպես էլ աղջիկների համար: Բացառություն են կազմում 10 – ից 12 – թղ դասարանցի՝ պատանիների և աղջիկների ազատ վարժությանները և խառը համակցությունները:

Մինչև 9 –րդ դասարանը ներառյալ ակրոբատիկական վարժությունները և հենացատկերը միանման են ինչպես տղաների այնպես էլ աղջիկների համար: 10 – 12 – թղ դասարաններում դիֆերենցված մոտեցում է պատանիների և աղջիկների կողմից կատարվող բազմամարտի բոլոր ձևերում:

Խմբակային մարմնամարզության կիրառման պրակտիկան հանրակրթական դպրոցում ցույց է տվել, որ մասնակիցների մոտ բարձրանում է մարմնամարզական վարժությունների նկատմամբ ուշադրությունը, աճում է դասերի մոտոր խտությունը: Այն խթանում է նաև աշակերտների մոտ սերմանելու դասերի ընթացքում հենքային տարրերի յուրացմանը:

Ծրագրային նյութի հաջող յուրացման պայմաններից է պարապոզների շարժողական ընդունակությունների մշակումը: Այդ կապակցությամբ ձեռնարկում ներկայացված են նաև մարմնամարզության ֆիզիկական պատրաստության ստուգողական հատուկ վարժություններ: Այդ վարժությունների յուրացման հիմնական նպատակներից է նաև այն, որ նրանք հենքային տարրեր են ծրագրային նյութի յուրացման համար:

Նման ուսումնական ձեռնարկի թողարկումը ՀՀ հանրակրթական դպրոցի ուսուցչի և աշակերտների համար, կհեշտացնի ծրագրային նյութի յուրացումը և կատարելագործումը:

Հեղինակը հույս է հայտնում, որ այն լայն արձագանք կգտնի մասնագետների շրջանում: Սիրով կընդունվի բոլոր առաջարկությունները և դիտողությունները ձեռնարկի վերաբերյալ:

ԳԼՈՒԽ 1. ՄԱՐՄԱՆԱՐՁԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԴՊՐՈՑՈՒՄ

Սույն գլխում փորձել ենք նկարագրել այն մարմնամարզական հիմնական միջոցները, որոնք մեր ուսումնասիրության առարկան և բովանդակությունն են: Համառոտ կանգ առնենք այդ միջոցներից յուրաքանչյուրի բովանդակությանը, փորձելով մատչելի դարձնել այն, ինչպես «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ուսուցիչներին, այնպես էլ դպրոցահասակ երեխաներին:

1.1 Ազատ վարժություններ

Ազատ վարժությունները մարմնամարզական տարրերից կազմված համակցություններ են, որոնք կատարվում են հատակի վրա, իսկ սպորտային մարմնամարզության մեջ՝ հատուկ գորգապատ հարթակի (12 X 12մ): Ազատ վարժություններին հատուկ են շարժումների բարդ կոորդինացումը և կատարման մարմնամարզական ոճը: Մարմնամարզության առողջարական (ընդհանուր զարգացնող) ձևերում ազատ վարժություններն օգտագործվում են շարժումների կոորդինացիա, դիմացկունության և շատ այլ հատկություններ դաստիարակելու համար:

Ազատ վարժությունները կարող են նպատակաուղղված լինել տարբեր սեռի և պատրաստության կոնտիգենտի համար (դպրոցահասակներ, նախադպրոցականներ, տարբեր պատրաստության մարմնամարզիկներ և այլն):

Այն կարող է լինել անհատական, խմբակային, կատարվել երաժշտության ուղեկցությամբ և առանց երաժշտության:

Խմբակային ազատ վարժությունները կազմվում են լավ յուրացված, սովորաբար՝ պարզ տարրերից, կատարվում են առանց առարկաների և առարկաներով: Հիմնական բարդությունը համիլների համատեղ և համագործակցված կատարման մեջ է: Գնահատվում է ոչ թե յուրաքանչյուր մասնակցի կատարումն առանձին - առանձին, այլ խմբի կատարումն ամբողջությամբ, նրանց կատարման ճշգրտությունը, ռիթմայնությունը և այլ չափանիշներ (գնահատման չափորոշիչները ներկայացված են առանձին բաժնում):

Անհատական ազատ վարժությունները բաժանվում են սպորտային վարժությունների և ուսումնական համակցությունների (վարժությունների համալիրներ): Սպորտային ազատ վարժությունները մարմնամարզական բազմամարտի (ինչպես կանանց, այնպես էլ տղամարդկանց) ձևերից են որոնք կատարվում են հատուկ հարթակի վրա: Կրտսեր մարզական կարգերում թույլատրվում է կատարել երկու կամ երեք մարզիկներով, սակայն որակը գնահատվում է առանձին: Ցածր կարգերում տղաների ազատ վարժությունները

կարելի է կատարել ակրոբատիկական վազքուղու վրա: Կանանց ազատ վարժությունների կատարման ժամանակ երաժշտության ուղեկցությունը պարտադիր է:

Ուսումնական համակցությունները կազմվում են ոչ ավելի, քան 64 հաշվով և ոչ պակաս 16 հաշվից: Ի տարբերություն ընդհանուր զարգացնող վարժությունների, ավարտվող դրությունը ուսումնական համակցությունում պարտադիր չէ որ համընկնի ելմանդիրքի հետ: Եթե համակցությունը կազմված է 16 հաշվից ավել և կատարվում է գնահատմամբ, ապա այն կարելի է համարել սպորտային ազատ վարժություններ: Ուսումնական համակցությունները կարող են կազմվել ընդհանուր զարգացնող վարժությունների տարրերից, իրենց մեջ պարունակել հիգիենիկ և արտադրական մարմնամարզության տարրեր, պարզագույն ակրոբատիկական շարժումներ:

Ազատ վարժությունները նպաստում են բոլոր շարժողական ընդունակությունների մշակմանը (դինամցկունություն, արագաշարժություն, ճարպկություն, ուժային հատկություններ, ճկունություն): Ազատ վարժությունների տարրերի ճշգրիտ և ռիթմով կատարումը նպաստում է պարապողների սրտանոթային, շնչառական, սենսոր համակարգերի գործառուբային հնարավորությունների բարձրացմանը: Վերջինիս մասին խոսելիս այն արտահայտվում է պարապողների մոտ այնպիսի բնորոշ հատկությունների մշակման ցուցանիշներով, ինչպիսիք են՝ շարժումների լայնույթը, տեմպը՝ ռիթմը, տարածության մեջ մարմնի տարբեր դիրքերը, մկանային և կամային ճիգերի մեծացումը և ուղղությունը: Ազատ վարժությունները սովորաբար իրենց մեջ պարունակում են ավելի լայն և բազմապիսի հնարավորություններ, քան գործիքների վրա կատարվող վարժությունները:

Ազատ վարժությունները կատարելագործում են այնպիսի հմտություններ, որոնք նպաստում են պարապողների ճիշտ կեցվածքի, կամային և էնոցիոնալ հատկությունների, ինչպես նաև շարժողական փորձի ձևավորմանը: Խմբային ազատ վարժությունները նպաստում են՝ ընկերասիրությանը, միմյանց հետ շփվելուն, սեփական գործողությունների նկատմամբ պատասխանատվությանը, փոխօգնությանը, կոլեկտիվի համերաշխությանը:

Առարկաներով ազատ վարժությունները կատարվում են ինչպես ուսումնական, այնպես էլ խմբակային ազատ վարժություններում: Առարկաներով ազատ վարժությունները հիմնականում կատարվում են գեղարվեստական մարմնամարզությունում: Բացի գեղարվեստական մարմնամարզության մեջ կիրառվող առարկաներից, ազատ վարժությունները կարող են կատարվել հանտելներով, մարմնամարզական փայտով, ձողով և այլն: Նման վարժությունների կատարումով, բացի վերը նշված ընդունակություններից, երեխաների մոտ ձևավորվում և կատարելագործվում են դաստակների շարժման հմտությունները: Նման հմտություններն

ունենալով կիրառական նշանակություն, հատկապես նախադպրոցական և կրտսեր դպրոցահասակ երեխաների համար, նպաստում են վայելչագրությանը, երաժշտական գործիքների վրա նվազելուն, աշխատանքային գործողություններում, կենցաղում, ինչպես նաև սպորտային շարժողական գործողություններ մշակելուն:

Ազատ վարժություններն ընդգրկում են տարբեր ձևերի վարժությունների տարրեր (ընդհանուր զարգացնող վարժություններ, գեղարվեստական մարմնամարզություն, ակրոբատիկա, պարարվեստ և այլն) և կազմվում են կոմպոզիցիաների պահանջներին համապատասխան: Կոմպոզիցիա ասելով հասկանում ենք մարմնամարզական տարրերի տրամաբանական համակցությունը, տարրերի կապակցությունների հաջորդական կատարումը: Կոմպոզիցիան պետք է լինի հարմոնիկ և դինամիկ, իր մեջ պարունակի բազմաբնույթ տարրեր, թելադրի շարժումներ տարբեր ուղղություններով: Խմբակային ազատ վարժությունների կոմպոզիցիան պայմանավորված է նաև կատարողների փոխադարձ դասավորմամբ և նրանց սինխրոն տեղաշարժմամբ:

Խմբային ազատ վարժություններում մասնակիցները սովորաբար կատարում են ոչ բարդ տարրեր: Բարդությունը կայանում է շարժումների սինխրոն կատարման, տարրերի համատեղ բովանդակության մեջ: Եթե խմբային վարժության կատարման սկզբից մինչև ավարտը մասնակիցների դասավորությունը պահպանվում է և միանման շարժումները միասին են կատարվում, ապա կարելի է ասել, որ վարժությունը կատարվում է սինխրոն:

Ավելի բարդ խմբային վարժություններում երբեմն ծրագիրը ընդգրկում է որոշակի քանակությամբ համատեղ քայլեր և միաժամանակյա դարձումներ:

Ավելի բարդ խմբային վարժություններ են համարվում շարափոխումները օրինակ՝ շարքերում բացվելը և փակվելը, տողաններից շրջաններ կազմելը: Հատկապես բարդ է շարքերի միմյանց միջև անցնելը («սանրելը»), երբ շարքերը հանդիպակաց են քայլում:

Խմբային ազատ վարժությունները, բացի դասարանային ծրագրի կատարումից և գնահատումից, կարող են օգտագործվել ֆիզկուլտուրային և հոբբեյանական տոնակատարություններում:

Ազատ վարժությունների ուսուցման առաջին ժամանակաշրջանը «շարժումների դպրոցի» ձևավորումն է, այսինքն՝ տարրերի, պարզագույն համակցությունների և շարժումների անսխալ՝ մարմնամարզական ոճով կատարելը: Այդ «դպրոցի» միջոցները, ոչ թե պատահական, այլ ճշգրիտ ընտրված ընդհանուր զարգացնող վարժություններ են: Վարժությունների որակի բարելավման համար անհրաժեշտ են հսկումը և ինքնահսկումը: Վերջինս լրիվ հնարավոր է իրականացնել՝ հայելու առաջ կատարելով հանձնարարությունը: Հսկումը կատարվում է մանկավարժի կողմից, կամ

կազմակերպվում է զույգերով կատարում, որտեղ մեկի կատարումը մյուսի կողմից շտկվում է:

Մշտապես անհրաժեշտ է ուշադրություն դարձնել պարապողների կեցվածքին, գլխի դրությունը, ձեռքերին, դաստակներին, օրինակ՝ առաջ թեքվելիս ձեռքերի կողմ դրությունը հսկվում է, անհրաժեշտ է հետևել, որպեսզի իրանը լինի արտակոր և հորիզոնական դրությամբ, գլուխը բարձր, ձեռքերն ուսերի հարթությամբ, ավերով առաջ: «Դպրոցի» ձևավորման համար մեծ նշանակություն ունի խորեոգրաֆիկ (պարարվեստի տարրեր) պատրաստությունը:

Ազատ վարժությունների ուսուցումը կատարվում է ինչպես դասի նախապատրաստական, այնպես էլ հիմնական մասերում: Նախապատրաստական մասում ուսուցանվում են պարզ տարրեր և կապակցություններ:

Նախապատրաստական մասում հաճախ կիրառվում է ուսուցման ճակատային մեթոդը: Ուսուցանվող տարրերը կատարվում են սկզբում դանդաղ տեմպով՝ տակտ առ տակտ, այնուհետև լայնույթը և տեմպը աստիճանաբար ավելացվում է: Պարապմունքի այդ մասում հաճախ օգտագործվում է ճակատային մեթոդը: Ուսուցանվող տարրերը և կապակցությունները նախ կատարվում են մաս – մաս, սկեռելով ուշադրությունը բարդ շարժումներին, հսկելով այդ վարժությունների ճշգրտությանը: Կատարելագործվում է տարրերի կատարման ոճը, ավելացվում է երաժշտության ուղեկցությունը:

Դասի հիմնական մասում ուսուցանվում են ավելի բարդ տարրերը՝ հավասարակշռություն, կանգեր, շրջումներ, ցատկեր, դարձումներ և այլն: Ուսուցումը կարող է լինել անհատական և խմբակային մեթոդներով:

Եթե դասի նախապատրաստական մասում պարապողները վարժությունները յուրացնում էին գլխավորապես հատակի կամ գորգի վրա, ապա հիմնական մասում օգտագործվում են ներքնակներ, կանրջակ, ակրոբատիկական ցատկուղի, պորոլոնի փոսեր և այլ գործիքներ, հարմարանքներ:

Ազատ վարժությունները, որոնք կատարվում են երաժշտության ուղեկցությամբ, ուսուցանվում են «ութնյակներով»: Նոր յուրացվող «ութնյակ» ավելացնելիս արդեն յուրացված վարժությունը («ութնյակին»), անհրաժեշտ է նախ կատարել դանդաղ տեմպով, այնուհետև աստիճանաբար ավելացնել տեմպը:

Ազատ վարժությունների կատարելագործման ժամանակահատվածում անհրաժեշտ է այն կատարել ամբողջությամբ (բոլոր տակտերը հաջորդաբար), ընդ որում՝ առանձին բարդ տարրեր շարունակվում են առանձին (ամբողջական կատարումից դուրս) կատարելագործվել:

Շարժումների մտապահման նպատակով և դիմացկունության մշակման համար մարզումների ժամանակ հաճախ ազատ վարժություններն առանց դադարի կատարում են 2-3 անգամ: Նշված մեթոդը ազատ վարժություններում համարվում է ավելի արդյունավետ և նպատակային, քան մարմնամարզության բազմամարտի այլ ձևերում:

Ուսումնական ձեռնարկում մեր կողմից մշակվել են ազատ վարժությունների համալիրներ հանրակրթական դպրոցի 1 - 12-րդ դասարանների աշակերտների համար: Այդ համալիրները նախատեսված են ամբողջ խմբով (դասարանով) կատարելու նպատակով: Սակայն ուսուցչի հայացողությամբ հնարավոր է նաև անհատական կատարումը: Բացառված չէ նաև աշակերտների կողմից համալիրների կազմելը և երաժշտության ընտրությունը:

Նման մոտեցումը կնպաստի աշակերտների վերացական մտածողությանը և կպարտավորեցնի ավելի ոգևորված և ստեղծագործաբար կատարելու համալիրները:

Թիվ 1. նկարում ներկայացված են ազատ վարժությունների հիմնական մի շարք դրություններ, որոնց ճշգրիտ կատարումը կնպաստի ազատ վարժությունների կատարելագործմանը:



Նկ 1. Ազատ վարժությունների հիմնական դրությունները

1. կքնիստ, 2. կիսակքանիստ, 3. արտանկ աջով, 4. թեք արտանկ, 5. աջ արտանկ թեքումով, 6. խորն արտանկ, 7. արտանկ ձախով, 8. արտակոր, 9. ալիք, 10. ծնկաչոք, 11. կանգ՝ ոտքերը զատած, 12. կանգ՝ ոտքերը լայն զատած, 13. կանգ՝ ոտքերը նեղ զատած, 14. թեքում՝ ձեռքերը գոտկատեղին, 15. թեքում արտակոր, 16. լայն կանգից թեքում հետ՝ հրվելով աջ ձեռքով հատակին, 17. լայն կանգից թեքում ձեռքերը կողմ, 18. թեքում բռնած

ազդրերից, 19. կոր կքանիստ, 20. հավասարակշռություն աջին (ձախին), 21. կողմնային
հավասարակշռություն, 22. կիսաօղաձև հավասարակշռություն, 23. դիմային
հավասարակշռություն, 24. ուղղաձիգ հավասարակշռություն:

1.2. Ակրոբատիկական վարժություններ

Ակրոբատիկական վարժությունները պարապողների վրա թողնում են բազմակողմանի արդյունավետ ազդեցություն: Ակրոբատիկայով մարզվելու գործընթացում ամրապնդվում է առողջությունը, մշակվում է շարժումների կոորդինացիան, մկանները, շարժողական գործողությունների արագությունը, դինամցկունությունը, հավասարակշռության ապարատի կայունությունը, ստատիկ և դինամիկ հավասարակշռությունը, ուշադրության կենտրոնացման կարողությունը, վարժությունները հիշելու ունակությունը, համարձակությունը սեփական կարողությունների դաստիարակումը, ընկերասիրության զարգացումը, կուլեկտիվիզմը, վստահությունը, սեփական ուժերին և այլն: Նշված կարողությունների և ընդունակությունների մշակման գործընթացը ակրոբատիկական վարժությունների շնորհիվ կարել է համարել մատաղ սերնդի ֆիզիկական դաստիարակման կարևորագույն գործընթացներից մեկը: Հանրակրթական դպրոցում ակրոբատիկական վարժությունների յուրացման և կատարելագործման գործընթացը արդյունավետ ընթանալու համար, անհրաժեշտ է իմանալ ծրագրային նյութի վարժությունների կատարման տեխնիկան և նրանց ուսուցման մեթոդները:

Տարբերում են ակրոբատիկական վարժությունների դասակարգման երկու հիմնական ուղղություն՝ հավասարակշռություններ և պտտական տարրեր, որոնք կատարվում են անհատական, զույգերով և խմբով:

Հավասարակշռության հիմքում ընկած են մարմնի դիրքի պահպանումը տատանվող մարմնի հավասարակշռություններում: Դրանք են՝ կանգերը, հավասարակշռությունները, հենումները, «կամուրջները», լարանները, պահումներն ու բուրգերը:

Երկրորդ խումբը պտտական շարժումներն են, որոնք կատարվում են մարմնի պտույտներով՝ ընդհանրացնելով բոլոր ակրոբատիկական վարժությունները: Դրանք տարբեր աստիճանի դարձումներ են՝ ուղղաձիգ, առաջիետային կամ ճակատային առանցքների շուրջը: Պտտական շարժումները կատարվում են՝ հենումից պոկվելով (գլուխկոնծիներ, շրջադարձեր, սալտոների տարատեսակներ և այլն):

Ստորև կներկայացվեն ակրոբատիկական այնպիսի վարժությունների կատարման տեխնիկական և ուսուցման մեթոդներ, որոնք հիմնականում ընդգրկված են հանրակրթական դպրոցի «ֆիզիկական կուլտուրա» առարկայի տարբեր դասարանների ծրագրերում:

ՀԱՎԱՍԱՐԱԿՇՈՒԹՅԱՆ ՊԱՐԶԱԳՈՒՅՆ ՏԱՐԻԵՐ

Թիկնականգ: Մարմնի ուղղահայաց դրությունն է՝ թիակների և պարանոցի վրա, ոտքերը վեր, զույգ ձեռքերով բռնած մեջքից, բազուկներով հենված հատակին: Կարելի է կատարել նաև առանց մեջքը բռնելու:

Ուսուցման հաջորդականությունը.

1. կծկված նստած դրությունից գլորում հետ, թիկնականգ ծալված ձեռքերով: Գլորման վերջնակետում բռնել թիակների տակից և պահել: Գլորվելով առաջ՝ վերադառնալ ելադիրք, 2. նույնը՝ հենում կքանստած դրությունից, 3. հենում՝ նստած դրությունից, գլորվելով հետ՝ թիկնականգ ծալված, 4. վերը նշված բոլոր դրություններից թիկնականգ ուղիղ ոտքերով:

Չնարավոր սխալները՝ անբավարար գլորումը, ուղղահայաց դրության չհասնելը, պարանոցի վրա չհենվելը, բազուկները մարմնից հեռացնելը:

Կանգ նախաբազուկների: Չենում՝ կքանստած մեկ ոտքին, մյուսը հետևում, հենվել նախաբազուկներով հատակին, ձեռքերը դնելով զուգահեռ, ուսերի լայնությամբ: Ուսերը տալով առաջ, մի ոտքի թափով, մյուսի հրումով կատարել կանգ նախաբազուկներին, նույնը կարելի է կատարել կիսալարանից:

Չնարավոր սխալները՝ իրանի ոչ ուղղահայաց դիրքը, ձեռքերի ասիմետրիան:

Կանգ գլխի և ձեռքերի վրա: Չենում՝ կքանստած դրությունից ուժով կամ ոտքերի հրումով գլուխը դրվում է ձեռքերից առաջ այնպես, որ հենման 3 կետերը կազմեն եռանկյուն (ձեռքերը և գլուխը):

Ուսուցման հաջորդականությունը.

1. հենում՝ կքանստած դրությունից, ծնկները դնել արմունկներին և ամբողջ ծանրությունը տեղափոխել ձեռքերի վրա,
2. նույնը՝ ոտքերը հատակից պոկելով,
3. նույնը՝ գլուխը դնելով հատակին (օգնությամբ),
4. զուգափայտի վրա նիստ՝ ոտքերը զատած դրությունից վերաբռնումով առջևից և ծանրությունը տեղափոխելով ձեռքերի վրա, ոտքերը պոկել ձողերից,
5. հենում՝ կքանստած դրությունից կանգ գլխի վրա:

Օգնությունը: կանգնած կողքից, բռնել ոտքերից: Մարմինը բարձրացնելիս օգնել, իսկ գլուխը դնելիս ծանրությունը նվազեցնել: Չթողնել, որ մարմինն ուղղահայացից անցնի:

Չնարավոր սխալները՝ ձեռքերի վրա ծանրության չպահելը, գլուխը ձեռքերի արանքում դնելը, ամբողջ ծանրությունը գլխի վրա տեղափոխելը, արտակորվելը, ուղղահայացն անցնելը:

Կանգ ձեռքերին: կատարվում է հենում՝ կիսակքանստած հրման ոտքին, թափայինը հետ դրությունից: Ձեռքերը հենվում են ոտքից առաջ, հրման ոտքով կատարվում է հրում՝ միաժամանակ թափային ոտքը հասցնելով ուղղահայաց դրության, իսկ հրմանը արագ միացվում է նրան: Ստացվում է՝ կանգ ձեռքերի վրա, մարմինը՝ ուղղահայաց վեր: Ամբողջ գործողության ժամանակ ձեռքերն ուղիղ են:

Ուսուցման հաջորդականությունը.

1. նկարագրված գործողությունը կատարել պատի մոտ, ներբաններով հենվելով պատին, ձեռքերը լրիվ ուղղել, գլուխը պահել հետ (պահել 3-4 հաշիվ),
2. նույնը՝ առանց պատի օգնության,
3. նույնը՝ ինքնուրույն:

Օգնությունը – կանգնած պարապողի կողքից՝ բռնել նրա ոտքերից, կամ մի ձեռքով՝ կրծքավանդակից, մյուս՝ ազդրերից:

Չնարավոր սխալներն են՝ ձեռքերի թափով դնելը, ոտքի չափից ուժեղ թափը կամ հրումը, գլուխն առաջ թեքելը, ոտքերի և ձեռքերի ծալելը, արտակորվելով ուղղահայացն անցնելը:

«Կամուրջ»: կատարվում է մեջքին պառկած կամ կանգնած դրությունից, ինչպես նաև շրջում առաջ տարրից հետո: Մեջքին պառկած դրությունից ոտքերը ծալել և դնել կոնքազդրային հողի, իսկ ձեռքերը՝ ուսերին մոտ: Այս ելադիրքից սեղմելով ձեռքերը, ոտքերն ուղղել, գլուխը հետ պառկած, իրանն արտակորված:

Ուսուցման հաջորդականությունը.

1. ձգողական վարժություններ դաստակային, ուսային և կոնքազդրային հողերում,
2. կանգնած՝ մեջքով մարմնամարզական պատին, գլխավերևում բռնելով ձողանն ուսերին մոտ, արտակորումներ,
3. կանգնած՝ մեջքով մարմնամարզական պատին, արտակորումով բռնել ձողանը ուսերին մոտ և աստիճանաբար իջնել «կամուրջ»,
4. մեջքին պառկած դրությունից ձեռքերը ծալել գլխի մոտ, ոտքերը զատած և ծալված, ուղղելով ձեռքերը և ոտքերը «կամուրջ»,
5. կանգնած դրությունից՝ օգնությամբ իջնել «կամուրջ»: Նույնը՝ առանց օգնության,
6. իջնել «կամուրջ» ձեռնականգ դրությունից (օգնությամբ և առանց օգնության):

Օգնությունը – կանգնել կողքից, բռնելով պարապողի գոտկատեղից, իջեցնելով նրան «կամուրջ» դրության:

Չնարավոր սխալներն են՝ ձեռքերի հեռու դնելը, գլուխն առաջ թեքելը, թաթերին բարձրանալը, ոտքերով և ձեռքերով անբավարար սեղմումը դեպի վեր, անբավարար արտակորումը:

«Կամուրջ» մեկ ոտքի վրա: Կատարելով «կամուրջ» տարրը, ծանրությունը տեղափոխել մեկ ձեռքի և ոտքի վրա, մյուս ոտքը ծալված կամ ձգված բարձրացնել վեր:

«Կամուրջ» ծնկների: Կանգ ծնկներին դիրքից ձեռքերը վեր, արտակորվելով կատարել «կամուրջ» ծնկներին տարրը: Կարելի է կատարել նաև հենվելով մարմնամարզական նստարանին:

Կիսալարանների և լարանների ուսուցման նախապատրաստական վարժություններ.

1. նստած ծալապատիկ, ծնկները, զսպանակած սեղմելով, հասցնել հատակին:
2. արտանկ առաջ (կողմ)՝ ոտքերը լայն զատած: Ջսպանակային շարժումներ վեր ու վար՝ ձգելով ազդրերի մկանները,
3. կանգ կողքով՝ մեկ ոտքը դրած մարմնամարզական պատին: Ջսպանակային թեքումներ կողմ, ինչպես նաև ցած: Նույնը՝ ստատիկ ձգումով:
4. հենված կիսալարանով՝ զսպանակային շարժումներ՝ ազդրերը հասցնելով հատակին:
5. կանգ դրությունից ոտքերն առաջ և հետ սահեցնելով՝ իջնել լարան:

Հնարավոր սխալներն են՝ ձգումների ժամանակ ծնկների ծալում, ոտքերի շեղում հորիզոնական գծից, թեքում կողմ, ազդրերի և ցայլոսկրի հատակին հպման բացակայություն:

ԱՎՐՈՒՄՏԻԿԱԿԱՆ ՊԱՐՁԱԳՈՒՅՆ ՑԱՏԿԵՐ

Կծկումներ – ճիշտ կծկվելը նպաստում է գլորումների, գլուխկոնծիների և սալտոների բարեհաջող կատարմանը:

Ուսուցման հաջորդականությունը.

1. **Կծկում նստած :** Հենում նստած դրությունից ոտքերը ծալել ծնկած և կոնքազդրային հողերում, բռնել սրունքների մեջտեղից, ոտքերը սեղմել կրծքին, գլուխը թեքել առաջ: Ծնկները պահել միմյանցից 10-15սմ հեռու, որպեսզի ծնկները չդիպչեն միմյանց:
2. **Կծկում մեջքին պառկած:** Մեջքին պառկած դրությունից ոտքերը ծալելով, իրանը կորացնելով առաջ՝ բռնել սրունքները, գլուխը թեքել առաջ՝ կծկվել:
3. **Կծկում կրանստած:** Կատարվում է նեղ կանգնվածքից՝ կրանստելով, սրունքները բռնելով, մարմինը կորացրած առաջ, գլուխը նույնպես թեքած առաջ:

Բոլոր կծկումները յուրացնելու հետ մեկտեղ մշակել դրանց արագ՝ կտրուկ կատարումը:

Չնարավոր սխալներն են՝ գլխի և իրանի անբավարար առաջ թեքումը (կորացումը), ծնկների միմյանց հպումը, դանդաղ կծկվելը:

Գլորումներ:

1.Գլորում առաջ և հետ - հատակին նստած կծկված դրությունից գլորվել հետ, մինչև պարանոցի հպումը ներքնակին և գլորվելով առաջ՝ վերադառնալ ելադիրք:

2.Գլորում՝ հենում նստած դրությունից - գլորվելով հետ՝ կծկվել և գլորվելով առաջ՝ ընդունել հենում նստած դիրքը: Չետ գլորվելիս ոտքերը լրիվ հպել կրծքին, իսկ առաջ գլորվելիս՝ գլուխն ու ոտքերը արագ տանել առաջ:

3.Գլորում կանգնած դրությունից - արագ կքանստելով կծկվել և գլորվել հետ, ապա գլորվելով առաջ՝ բարձրանալ՝ ընդունել ելադիրք:

Չնարավոր սխալներն են՝ ձեռքերի թույլ բռնվածք, գլորում՝ հենվելով շփման դաշտին:

Գլորումներ կողմ: Կողմ գլորումները կատարվում են կողքին կամ մեջքին պառկած դրությունից՝ 180° պտտվելով երկայնակի առանցքի շուրջը: Մարմնի ուղիղ դրությունը պահպանվում է՝

- փորին պառկած՝ ձեռքերը վեր դրությունից գլորում աջ և ձախ՝ պառկել մեջքին,
- մեջքին պառկած՝ ձեռքերը վեր դրությունից գլորվել աջ կամ ձախ՝ պառկել փորին,
- հենում՝ ծնկած դրությունից, հենվելով նախաբազուկներին՝ գլորվել կողմ մինչև մեջքի վրա կծկված դրությունը, ապա գլորվել հակառակ ուղղությամբ՝ ընդունել ելադիրք,
- հենում՝ նստած կրունկներին դրությունից գլորում կողմ, ծնկել մեկ ոտքին, մյուսը՝ կողմ,
- ծնկած մեկ ոտքին, մյուսը՝ կողմ, դրությունից գլորում կողմ մինչև ծնկած նույն ոտքին, մյուսը՝ կողմ,
- նստած՝ ոտքերը զատած դրությունից գլորում կողմ՝ դարձումով 180°. կատարվում է սրունքներից բռնած և ծալած դրությամբ: Չասնելով մեջքին կատարվում է դարձում և ընդունվում ելադիրքը հակառակ ուղղությամբ:

Գլուխկողմի առաջ - կատարվում է տարբեր ելադիրքերից:

Ձեռքերը դրվում են հնարավորին չափ առաջ, որից հետո արագ կծկվելով՝ մարմնի ծանրությունը տեղափոխվում է ձեռքերի վրա, ձեռքերը ծալելով՝ պարանոցը դրվում է հատակին և գլորվելով առաջ՝ ընդունում է կքանիստ դիրքը: Գլորվելիս բռնում են սրունքները և պահում մինչև կատարման ավարտը:

Ուսուցման հաջորդականությունը.

1. Կքանստած դրությունից գլորվել հետ և թափով՝ առաջ, մինչև հենում կքանիստ դրությունը: Ձեռքերի օգնությամբ մշակել լիարժեք կծկվելը, առաջ գլորվելու արագությունը:

2. Նույնը՝ առանց ձեռքերի օգնության:

3. Մարմնամարզական պատին հենում պառկած դրությունից (ոտքերը պատի 4 – 5-րդ ձողանին) ծալելով ձեռքերը՝ գլուխը թեքել առաջ, մինչև պարանոցի հպումը ներքնակին:

4. Կքանստած դրությունից ձեռքերը դնել առաջ, ծալել և մարմնի ծանրությունը տեղափոխել ձեռքերին, պարանոցը դնել հատակին՝ կծկվել և գլորվել առաջ՝ մինչև հենում կքանիստ դիրքը՝ ձեռքերի օգնությամբ:

5. Նույնը՝ առանց ձեռքերի օգնության:

6. Նույնը՝ մի փոքր ցատկով:

Կքանիստ դրությունից գլուխկոնծի յուրացնելուց հետո կարելի է կատարել նաև կիսակքանիստից (լողորդի մեկնարկից), կանգնած դրությունից և ցատկով (երկար գլուխկոնծի):

Օգնությունը – կատարվում է պարապողի կողքից ծնկած դիրքով: Մեկ ձեռքով պահվում է թիակներից, մյուսով՝ սրունքներից, որով հեշտացնում է մեջքի վրա գլորումը:

Չնարավոր սխալներն են՝ գլխի վրա հենվելը, անբավարար կծկվելը, մեջքով հատակին հարվածելը:

Գլուխկոնծի հետ – կատարվում է տարբեր ելադիրքերից:

Չենում կքանստած դրությունից (ոտքերը թաթերի լայնությամբ զատած)՝ գլորվել հետ և կծկվելիս բռնել սրունքներից, ապա ձեռքերը դնել ուսերի մոտ և սեղմելով՝ շրջվել ուսերի վրայով, ընդունել հենում կքանիստ դրությունը:

Ուսուցման հաջորդականությունը.

1. հենում կքանստած դրությունից՝ գլորվել հետ, ընդունել թիկնականգ դրությունը /կծկված/,
2. թիկնականգ դրությունից կծկվելով՝ ոտքերն իջեցնել հետ և ձեռքերը դնել ուսերին մոտ,
3. հենում կքանստած դրությունից՝ կծկվելով գլորում հետ և ձեռքերը դնել ուսերի մոտ,
4. նույնը, սակայն ձեռքերով սեղմելով և գլխի վրայով շրջվելով՝ ոտքերը դնել հատակին,
5. հենում կքանստած դրությունից՝ գլուխկոնծի հետ,
6. կանգնած դրությունից ընդունել կքանիստ դիրքը, ապա գլորվելով հետ՝ կատարել գլուխկոնծի հետ,

7. իրար հետ կապակցված երկու գլուխկոնծի հետ,

Օգնությունը – կատարվում է պարապողի կողքին մեկ ոտքով ծնկած դրությամբ: Մի ձեռքով օգնել ծոծրակից, մյուս ձեռքով՝ ուսի տակից՝ իրանը բարձրացնելու և ոտքն իջեցնելու համար:

Չնարավոր սխալներն են՝ ոչ լիարժեք կծկվելը, արագության պակասը, ուշացումով ձեռքերի դնելը և հրման բացակայությունը:

Շրջումներ: Իրենցից ներկայացնում են շրջադարձեր գլխի վրայից, ձեռքերի կամ ձեռքերի և գլխի հենումով: Որոշ շրջումներ կատարելիս /առաջ, կողմ, դարձումով/ ցանկալի արագություն ձեռքերման նպատակով անհրաժեշտ է կատարել լրացուցիչ ուսումնում:

Այն փոքրիկ ցատկ է առաջ՝ թափային ոտքով, հզոր թափ՝ հրման ոտքով առաջ և թափ ձեռքերով՝ ներքևից վեր:

Ճախրման ժամանակ իրանը մի փոքր թեքված է առաջ, հրման ոտքն իրանի շարունակությունն է, ձեռքերը՝ առաջ՝ վեր:

Առգետնումը հաջորդական է. սկզբում թափային, ապա հրման ոտքի վրա: Սկզբում ուսումնումը սովորել տեղից, առանց ձեռքերի շարժման, հետո ձեռքերի թափով, հետագայում քայլից, 3 քայլից և ապա վազքից:

Շրջում կողմ - ելադիրքն է՝ կանգնած դեմքով դեպի շարժման ուղղությունը, հրման ոտքն առաջ, նույնանուն ձեռքն առաջ, մյուսը՝ վեր:

Չրման ոտքը դրվում է առաջ, նրան հաջորդում է նույնանուն ձեռքը, ապա՝ մյուս ձեռքը դնելով և թափային ոտքի թափով կատարվում է անցողիկ կանգ ձեռքերի վրա՝ ոտքերը զատած: Երկրորդ ձեռքը դնելու և թափային ոտքը բարձրացնելու հետ կատարվում է ուսով դարձում 90°:

Շարժումը շարունակվում է՝ իջնելով թափային ոտքի վրա, հրման ոտքը պահած վեր, որին հաջորդում է մարմնի և ձեռքերի բարձրացումը, հրման ոտքի առգետնումը և կանգ թափային ոտքի վրա: Շարժումն ավարտվում է կանգ թափային ոտքին, մյուսը՝ կողմ, ձեռքերը կողմ դրությամբ, որից հետո հրման ոտքը միացվում է և ընդունվում հիմնական կանգ: Կատարվում է առանց թափի:

Ուսուցման հաջորդականությունը.


1. ձեռնականգ՝ մի ոտքի թափով, մյուսի՝ հրումով (օգնությամբ):
2. ձեռնականգ՝ ոտքերը զատած:
3. ելադիրքից հրման ոտքը և ձեռքերը հաջորդաբար դնել մեկ գծի վրա, թափային ոտքը պահած վեր, ապա հրման ոտքով հրվել, բարձրացնելով այն և ձեռքերի վրայից անցումով կանգնել թափային ոտքի վրա, ձեռքերը վեր:
4. նույնը՝ թափով,

5. շրջում կողմ` ինքնուրույն:

Օգնությունը – կանգնել մեջքի կողմից, խաչաձև բռնել գոտկատեղից: Կատարման ժամանակ օգնել, որպեսզի անցումը կատարվի ուղղահայաց դրությամբ:


Չնարավոր սխալներն են` գլուխն առաջ թեքելը, կոնքազդրային հոդի ծալումը, ոտքերն ու ձեռքերը մեկ գծի վրա չդնելը, ոտքերի թերզատումը, իրանը բարձրացնելիս ձեռքերն իջեցնելը, անբավարար արագությունը, հիման ոտքի թերի բարձրացումը:

Թիվ 2 նկարում ակրոբատիկական վարժությունների դրություններն ու տարրեր են, որոնց մեծամասնությունը ընդգրկված են հանրակրթական դպրոցի 1-ից 12 –րդ դասարանների «ֆիզիկական կուլտուրա» առարկայի ակրոբատիկական վարժությունների ծրագրում:



Նկ 2 Ակրոբատիկական դրություններ և տարրեր

1. Ծնկած աջին, 2. կանգ ծնկներից, 3. հենում մատած, 4. միստ անկյունով, 5. միստ անկյունով` բռնված սրունքներից, 6. միստ կրունկներից, 7. կիսակքանիստ, 8. կքանիստ, 9. հենում ձախ ծնկին, աջը հետ` ձեռքերի հենումով, 10. հենում կանգնած, 11. հենում պառկած, 12. հենում պառկած հետևից, 13. հենում պառկած ազդրերին, 14. կանգ աջ ծնկին` հենումով աջ ձեռքին, ձախը կողմ, 15. միստ կրունկներից` ձեռքերը վեր, 16. «լողորդի մեկնարկ», 17. թիկնականգ, 18. կանգ գլխի և ձեռքերի վրա, 19. կանգ ձեռքերին, 20. շրջում կողմ:



Նկ 3. Ակրոբատիկական դրություններ և տարրեր

1. գլորում (հետ, առաջ), 2. գլորումով հետ թիկնականգ, 3. գլուխկոնծի առաջ, 4. հենում կանգնած՝ զատած ոտքերով, 5. արտանկ աջով, 6. թեք արտանկ, 7. հենում կքանիստ, 8. կանուրջ, 9. կանուրջ աջ ոտքի և աջ ձեռքի վրա, 10. կանգ՝ լայն զատած ոտքերով, թեքված առաջ, 11. խորը թեքում՝ բռնված սրունքներից:

1.3. ՀԵՆԱՑԱՏԿԵՐ

Հենացատկերի բնութագիրը և մշակությունը

Հենացատկերը մեր ժամանակների օլիմպիական առաջին խաղերից հանդիսացել են սպորտային մարմնամարզության բազմամարտի ծրագրերի կարևոր բաժիններից մեկը:

Հենացատկերը կանանց և տղամարդկանց բազմամարտի ինքնուրույն մարզաձևերից են: Դրանք բարդ կոորդինացիոն, կարճատև շարժումների համակարգ են, որտեղ պահանջվում են մկանային բարձր ճիգեր, համարձակություն և էլի շատ որակներ:

Ցատկերն ունեն բազմակողմանի ներգործություն մարդու օրգանիզմի վրա՝ սիրտանոթային, շնչառական ոսկրակապանային և մյուս համակարգերի մարզման համար, մշակում են շարժողական ընդունակությունները, դաստիարակում՝ կամային հատկությունները: Դրանք մատչելի են տարբեր տարիքի, սեռի և ֆիզիկական պատրաստականության մարդկանց համար:

Մեծ է նաև ցատկերի կիրառական նշանակությունը: Տարբեր բնույթի ցատկերի յուրացումը հնարավորություն է ստեղծում արագ և թեթև հաղթահարել բնական և արհեստական արգելքները:

Մարմնամարզական ցատկերն ըստ շարժողական կառուցվածքի բաժանվում են երկու խմբի՝

- հասարակ ցատկեր, որոնք կատարվում են միայն ոտքերի հրումով,
- հենացատկեր՝ ոտքերի և նրանց հաջորդող ձեռքերի հրումով:

Հասարակ ցատկերից են ցատկ - բարձրությունը, բարձրության վրա, բարձրությունից (խորություն), երկարություն, ցատկապարանով, «պատուհանի» միջով, արգելքների վրայով և այլն: Այս ցատկերն ունեն թե՛ առողջարարական, և թե՛ կիրառական նշանակություն: Բացի դա հասարակ ցատկերն օգտագործվում են որպես նախապատրաստական վարժություններ հենացատկերի ուսուցման համար:

Հենացատկերը հիմնականում արհեստական ցատկեր, որոնք կատարվում են մարմնամարզական գործիքների, այծի և նժույգի վրայից:

Հենացատկերի որոշ ձևեր ունեն կիրառական նշանակություն, սակայն նրանց բարդ ձևերը ծնունդ են առել լոկ մարզական կյանքում:

Հենացատկերը հանրակրթական դպրոցի «ֆիզիկական կուլտուրա» առարկայի կարևոր բաղադրիչ մասն են կազմում:

Տարրական դպրոցում մարմնամարզական այլ միջոցների հետ ուսուցանվում են հասարակ (պարզ) ցատկեր, որոնք հենք են հանդիսանում ավելի բարձր դասարաններում հենացատկերի արդյունավետ յուրացմանը:

Հենացատկերի ուսուցումը դպրոցում սկսվում է 5 –րդ դասարանից:

Գոյություն ունեն 200-ից ավել հենացատկերի տեսակներ: Նրանցից 70–ը կատարվում են տարբեր մասշտաբի մրցումներում՝ սկսած պատանեկան առաջնություններից մինչև միջազգային խոշոր մրցումներ:

Դպրոցական ծրագրում հենացատկերի պարզագույն տարբերակներ են ուսուցանվում: Այդ ցատկերը՝ որպես կանոն, անհրաժեշտ է կատարել՝ հրվելով կանրջակից, որից հետո անցնել գործիքի վրայով՝ հրվելով ձեռքերով: Գործիքը տեղադրվում է անշարժ ձևով: Այդ նպատակով օգտագործվում են շղթաներ և փականներ, որոնց օգնությամբ գործիքը ամրացվում է հատակին: Թափավազքի ժամանակ չսահելու համար օգտագործվում է ռետինե վազքուղի:

Ցատկագործիքը և ռետինե վազքուղին հարկավոր է տեղադրել պատից 1.5 – 2.0մ. հեռավորության վրա, իսկ վայրեքի տեղը՝ 5.0մ ոչ պակաս հեռավորությամբ պատից:

Ամառային մարզահրապարակներում ցատկագործիքը սովորաբար տեղադրվում է հաստ տախտակների վրա, իսկ վայրէջքի համար պատրաստվում է հատուկ փոս՝ լցված ավազով կամ թեփով:

Չենացատկերը համարվում են դժվար յուրացվող շարժումների համակարգ: Ցատկը պահանջում է նպատակասլաց և համառ մարզումներ՝ մշակելով ցատկի առանձին փուլերը: Ցատկի բոլոր փուլերը (թափավազք, հրում ոտքերով, ձեռքերով հրում, առգետնում) անհրաժեշտ է մարզումների շնորհիվ հասցնել ավտոմատացման: Այդ կապակցությամբ փուլերը պետք է մարզել առանձին - առանձին: Այդ մարզման գործընթացը և համապատասխանաբար անհրաժեշտ հմտությունների ձեռքբերումը խորհուրդ է տրվում մշակել հետևյալ հաջորդականությամբ՝ ա) առգետնելու կայունության մշակում, բ) թափավազք, գ) ոտքերով հրում, դ) մարմնի դիրքի շտկում՝ հենազուրկ դրությունում, ե) ձեռքերով հրում:

Սակայն անհրաժեշտ է, օրինակ՝ առգետնելու ուսուցման ժամանակ չմոռանալ մյուս փուլերի մասին: Յուրաքանչյուր փուլի ուսուցումը պետք է կազմակերպվի համալիր ձևով, մշակելով ոչ թե առանձին, այլ կապելով մեկի մշակումը մյուսի հետ: Օրինակ՝ մշակելով վայրէջքի կայունությունը, զուգահեռաբար նույն պարապմունքում յուրացվում են մյուս փուլերի պարզագույն տարրեր:

Կայուն առգետնելը ունի մեծ նշանակություն հենացատկի կատարման ժամանակ, քանի որ այդ փուլից է կախված ամբողջ հենացատկի տպավորությունը:

Առգետնելիս սկզբից թաթերի՝ մատների ծայրերն են հավում ներքնակին, այնուհետև ամբողջ ներբանները և անհրաժեշտ է, որ ոտքերի բոլոր հոդերը այդ գործողության ընթացքում զսպանակելու նպատակով ծալվեն:

Ձեռքերը վայրէջքի պահին բարձրանում են առաջվեր, այնուհետև տարածվում կողմ, մեջքը պետք է պահել ուղիղ, գլուխը մի փոքր բարձրացնել և նայել առաջ:

Առգետնելու կայունությունը յուրացնելու նպատակով ուսուցիչը կարող է ուսուցանել այն ամբողջ խմբի հետ միաժամանակ՝ կատարելով հանձնարարությունը՝ ցատկ վեր (առաջ, կողմ, դարձումներով և այլն), ձգտել ճիշտ կատարելով այն և պահպանել հավասարակշռությունը:

Որակով ցատկելու կարևոր գործոններից է ճիշտ և արագ վազքը: Կախված ցատկի տեսակից՝ վազքը կարող է լինել կարճ և երկար (8 – 25մ): Ուսուցումը անհրաժեշտ է սկսել տեղում՝ ձեռքերի շարժումներից, տեղում վազքից, կարճ տարածության վազքերից՝ արագացումներով և տևական (1.5 – 2.0 րոպ)վազքից:

Մեծ սխալ է սաներին հանձնարարել վազքը արագացնելով ուսուցիչը և հրվելը կամրջակից, երբ նրանք դեռևս չեն տիրապետել վազքի տեխնիկային:

Թափավազքի ուսուցումը չի կարելի համարել ավարտված այնքան ժամանակ, քանի դեռ ցատկը չի կատարվել ամբողջությամբ:

Չենացատկերի առանձին փուլերի ուսուցման և կատարելագործման վարժություններ Վայրէջք և առգետնում

1. Ընդունել առգետնան դրությունը (պահել): Այն է՝ կիսակքանստած, կրունկները միասին, միացրած կամ զատած ծնկներով, ձեռքերն առաջ՝ դուրս,
2. հենում՝ կանգնած մարմնամարզական պատի մոտ, ուսուցումներ կիսակքանստելով, ընդունելով առգետնան դրությունը,
3. ցատկ վեր՝ արտակորված ցուցադրելով առգետնան դրությունը:
4. գլուխկոնծի առաջ և ցատկ վեր՝ արտակորված պահելով առգետնան դրությունը,
5. ցատկահարթակի կամ տարբեր գործիքների վրայից ցատկ խորություն, արտակորված տարբեր դարձումներով, պահելով կայուն առգետնում,
6. թափավազքից հրվել կամրջակից և ցատկ վեր՝ կծկվելով, ծալվելով, արտակորված, դարձումներով, ցուցադրելով կայուն վայրէջք և առգետնում:

ԹԱՓԱՎԱԶՔ

1. ԵՂ՝ կանգ զուգահեռ թաթերով, միմյանցից 5 – 10սմ զատ,
2. նույն դրությունից բարձրանալ թաթերին և պահել (կրկնել՝ 8 – 12 անգամ),
3. քայլք թաթերին՝ ծունկը բարձրացնելով առաջ, թաթը դնելով ամուր,
4. տեղում վազք՝ ձեռքերի առաջ ու հետ շարժումով (ձեռքերը կիսածավված),
5. վազք թաթերին՝ աստիճանաբար արագացնելով տենպը, թաթերը դնելով զուգահեռ և ամուր (10 -15մ),
6. վազք նշանակետերի վրայով (12 – 15 վազքաքայլ): Առաջին 3 – 4 կետերի միջև հեռավորությունը 1 մետր հաջորդաբար, յուրաքանչյուր նշումը միմյանցից 10 - ական սմ – ով հեռու,
7. վազք՝ մեկ ուղիղ գծի վրայով, տենպը արագացնելով,
8. վազք՝ ամուր թաթերի վրա և ամուր արգելքների վրայով (լցված գնդակներ, մարմնամարզական նստարան և այլն): Փոփոխել առարկաների հեռավորությունը և վազքի տենպը,
9. վազք՝ 20 – 25 մետր ամուր թաթերով և ծնկներով՝ լրացուցիչ բեռնումով (ծանր գոտի, կցագնդեր և այլն),

10. վազք՝ մարզչի տարբեր ազդանշանով (ծափ, հաշվարկ, սուլիչ և այլն) վազքի տեմպը, ռիթմը յուրացնելու համար,
11. թափավազք՝ 30 -35 մետր առավելագույն արագությամբ՝ պահպանելով թաթերի, ծնկների ամրությունը և ձեռքերի առաջ ու հետ շարժումը:

Կամրջակից ոստնելը և ոտքերով հրվելը

1. 2 – 3 քայլից մեկ ոտքի հրումով ցատկ զույգ ոտքին,
2. 3-4 քայլից մեկ ոտքի հրումով, մյուսի թափով ցատկ և վայրէջք, ներքնակաշերտի վրա՝ առգետնումը զույգ ոտքին,
3. մարմնամարզական պատին հենում՝ կանգնած դրությունից ոստյուններ՝ զույգ ոտքի թաթերին, ուղիղ և ամուր ծնկներով (ոստյունը առավել բարձրության),
4. տեղից բարձր կամ հեռու ոստյուն՝ ձեռքերի առաջ թափով,
5. ծնկած դրությունից ձեռքերի առաջ թափով ոստյուն՝ ընդունել կքանիստ կամ առգետնան դրություն,
6. ոստյուններ՝ թաթերին զույգ ոտքով, արգելքների վրայով (մարմնամարզական նստարան, լցված գնդակներ և այլն),
7. 40 – 50սմ բարձրությունից ցատկ՝ կամրջակին և վերցատկ,
8. 5-6 քայլ թափավազքից զույգ ոտքով՝ հրվել կամրջակից, ցատկել և բռնել ուղղահայաց կախված պարանից՝ ուսերի բարձրությամբ, (ցատկել՝ առանց արտակորվելու, բռնել ուղիղ ձեռքերով):

Առաջին ճախրման փուլ

1. Թափավազքից հրվել զույգ ոտքով և ցատկ՝ գլուխկոնծի ներքնակաշերտին (նույնը կարելի է առանց թափավազքի),
2. նույնը՝ 5-6 մետր թափավազքից հրվելով ոստնատախտակից կամ միմյանց վրա դրված կամրջակից,
3. 8-10 մետր թափավազքից զույգ ոտքի հրումով ճախրելով՝ գլուխկոնծի ներքնաշերտի վրա: Կամրջակի և պարանի վրայով ներքնակների միջև տարածությունը աստիճանաբար հեռացնել, պարանի բարձրությունը մեծացնել,
4. պառկած այծին՝ դենքով ցած, ծալված՝ բռնած մարմնամարզական պատից: Ոտքերով արագ հետթափ և արտակորվել,
5. կամրջակից (կարճ թափավազքից) հրվել և հետթափով բռնել ուղղահայաց պարանից,

6. որովայնի մկանների վրա պառկած՝ ձեռքեր վեր դրությունից թափով արտակորվել՝ ոտքերը և կուրծքը բարձրացնել հետ:


Յրում ձեռքերով

1. Լցված գնդակի նետումներ կրծքից՝ վեր կամ առաջ: Աստիճանաբար ավելացնել գնդակի քաշը և նետման հեռավորությունը,
2. նժույգի վրա դրված լցված գնդակի հրում ուղիղ ձեռքերով՝ ուսագոտու հաշվին,
3. մարմնամարզական այծի մոտ կանգնած՝ զատած ոտքերով, ուղիղ ձեռքերը հպած այծի կողին: Ուսերի հաշվին կտրուկ հրում ձեռքերով՝ այծը տեղափոխել առաջ,
4. հենում պառկած, ձեռքերի միջև դրված 6-10 սմ բարձրությամբ առարկա: Ձեռքերով հրվել առարկայից վեր՝ ծափ: Կատարել 10 վրկ արագ տեմպով, հրվելով ուսագոտու հաշվին,
5. ձեռքերով հենված կամրջակին, ոտքերով՝ մարմնամարզական պատին, (ձեռքերի և իրանի միջև անկյունը $90^\circ - 120^\circ$): Ձեռքերով հրումներ 8-10 անգամ՝ առավելագույն արագությամբ,
6. 40 – 50սմ բարձրության վրա, ձեռքերին կանգնած դրությունից ձեռքերի հրումով ցատկ՝ խորություն և կանգ ձեռքերին (հրումը ուսագոտու հաշվին),
7. հենում պառկած հատակին, դաստակների ծալում և տարածում,
8. հատուկ «սայլակի» վրա, պառկած փորին՝ գոտիով ձեռքերը կապված վեր: Պատից հրվել առավելագույն արագությամբ: Սայլակը ռետինե ժապավենով ամրացված է պատին,
9. պատի մոտ՝ ձեռքերին կանգնած դրությունից ուսյուններ ձեռքերի վրա առավելագույն արագությամբ,
10. զուգափայտի վրա հենված դրությունից ձեռքերի միաժամանակյա հրումներով տեղաշարժվել առաջ մինչև ծայրերը և վարցատկ,
11. զուգափայտի վրա հենված դրությունից ձեռքերի ծալում և տարածում,
12. հենում՝ պառկած հատակին, ոտքերը մարմնամարզական պատին: Ձեռքերը առավել արագությամբ ծալել և տարածել,
13. դեմքով կանգնել դեպի ուսոնատախտակը, առաջ թեքվելով անկ՝ հենում պառկած ուսոնատախտակին և ձեռքերով արագ հրվելով ընդունել ելադիրք:

Երկրորդ ճախրման փուլ

1. Խորության ցատկեր՝ տարբեր ձևերով և տարբեր գործիքներից: Հիմնական ուշադրությունը կենտրոնացնել ճախրման ընթացքում մարմնի, գլխի և ձեռքերի դրություններին՝ նկատի ունենալով այս կամ այն ցատկը,
2. վարժակիցների ձեռքերի վրա սևեռել տարբեր հենացատկերի ճախրման դրությունները,
3. նժույգի վրա՝ կանգնած դրությունից տարբեր տեսակի ցատկեր՝ շրջունով առաջ, շրջունով առաջ՝ ծավվելով, տարածվելով, տարբեր աստիճանի դարձումներով և այլն,
4. ձեռքերի նմանողական շարժումներ՝ ըստ կոնկրետ հենացատկի,
5. ցատկացանցից տարբեր ցատկերի ճախրման փուլի ուսուցում և կատարելագործում (վայրէջքը պորոլոնի փոսում),
6. տարբեր կառուցվածքային խմբերին պատկանող հենացատկերի երկրորդ ճախրման փուլի կատարելագործում՝ վայրէջքը ներքնակաշերտի վրա:

Նկ. 4. ներկայացված են հատուկ վարժություններ հենացատկի տարբեր փուլերի մշակման և կատարելագործման համար: Ստորև ներկայացվում է այդ վարժությունների բովանդակությունը:



Նկար 4. հատուկ վարժություններ հենացատկի մշակման և կատարելագործման համար

Կիսակքանհաստից ցատկ վեր՝ զատելով ոտքերը:

Կիսակքանհաստից (լողորդի մեկնարկից) ցատկ վեր՝ արտակոր:

Նժույզի (այծի) մոտ տեղադրված կամրջակից ուսոյուններ՝ ձեռքերով հենվելով գործիքին:

Ցատկ «պատուհանի» միջով: Երկու պարանները տարբեր բարձրությամբ, հորիզոնական կապելով կանգնակների վրա, ստացվում է «պատուհան»: Ցատկը կատարվում է պարանների արանքով: Այդ ցատկերը լինում են՝ դիմացից վազելով՝ անկյունով, կծկված և գլուխկոնծիով: Հրումը կատարվում է տեղից, վազքով մեկ և զույգ ոտքով: Ցատկը բարդացվում է «պատուհանը» փոքրացնելով կամ հեռացնելով:

Այծին պառկած, հենված որովայնի մկաններից, ձեռքերով բռնված մարմնամարզական պատի ձողանից: Ծալվել կոնքազդրային հողերում, ուղղել և տարածել ոտքերը հետ: Կանգնած այծից մեկ քայլ հեռվորությամբ, ձեռքերը՝ հենում այծի մարմնին: Կտրուկ հրել այծը առաջ ուսագոտու մկանների հաշվին:

Հենում՝ պառկած ձեռքերով մարմնամարզական նստարանին: Հրվելով զույգ ոտքով՝ կքանստել նստարանին և ցատկ վեր՝ արտակոր՝ վայրէջքը ներքնակին:

Թափավազքից հրվելով կամրջակից, ճախրելով՝ գլուխկոնծի արգելքի վրայից, վայրէջքը (գլուխկոնծին) ներքնակաշերտի վրա: Կարելի է բարդացնել վարժությունը՝ արգելքը բարձրացնելով և ներքնակաշերտը պակասեցնելով:

Ցատկ խորություն: Կատարվում է տարբեր գործիքների վրա կանգնած, նստած և այլ դրություններից և մարմնամարզական պատին հարմարեցրած հարթակից ինչպես նաև առաջ, հետ, արտակորված, ծալված, կծկված՝ հրվելով մեկ կամ զույգ ոտքով: Հնարավոր է ճախրման ընթացքում կատարել դարձումներ, ծալում–տարածումներ և այլ շարժումներ: Կարող են առաջադրվել ցատկել հեռու, մոտ, շրջանի մեջ, արգելքի վրայով, գնդակը ձեռքին պահած և այլն:

Ցատկ նժույզից մարզագործիքի վրա նժույզից (այծից) զույգ ոտքի հրումով ճախրացատկ թեք մարզագործիքի (ներքնաշերտի) վրա՝ պառկած որովայնի մկաններից: Նպաստում է ճախրման փայլը մշակելու համար:

Կամրջակ: Կամրջաձև հարթակ է՝ վրայից ոտքերով հրվելու համար:

Վազք՝ նշանակետերի վրայով (12 – 15 վազքաքայլ): Առաջին 3 – 4 կետերի միջև հեռավորությունը 60սմ հաջորդաբար, նշումը մինյանցից 10 -ական սմ- ով հեռու:

Վազք՝ ամուր թաթերի վրա և ամուր արգելքների վրայով (լքված գնդակներ, մարմնամարզական նստարան և այլն): Փոփոխել առարկաների հեռավորությունը և վազքի տեմպը:

Մարմնամարզական պատին հենում՝ կանգնած դրությունից, ուստյուններ՝ զույգ ոտքին, ուղիղ և ամուր ծնկներով՝ ձգտելով ուստյունները կատարել բարձր:

Ուստյուններ՝ կիսակքանստելով, հրվելով զույգ ոտքով արգելքների վրայով (մարմնամարզական նստարան, լցված գնդակներ և այլն պատկերված են դպրոցական ծրագրում նախատեսված հենացատկերը: Այդ ցատկերի նկարագիրը և կատարման տեխնիկան ներկայացվում է ստորև:

Ցատկ անկյունով (ուղիղ թափավազքից) (նկ. 5): Կամրջակից հրվել, ձեռքերով հենվել բռնակներին, ոտքերի թափով կողմ դառնալ 900 և անցնել գործիքի մյուս կողմը: Գործիքն անցնելիս դարձման շնորհիվ ոտքերն իրանի հետ կազմում են ուղիղ անկյուն: Դարձման պահին նույնանուն բռնակից հրվել, ծանրությունը տեղափոխել տարանուն ձեռքին, ապա վերաբռնելով կատարել վայրէջք:


Ցատկ անկյունով՝ թեք թափավազքից (նկ. 5): Կատարվում է նժույգի նկատմամբ թեք թափավազքից՝ դրսի ոտքի հրումով: Բնականաբար կամրջակն էլ դրվում է թեք: Ցատկը աջ կողմից կատարելիս հրվել ձախ ոտքով, գործիքին հենվել աջ ձեռքով: Ձախ կողմից վազելիս՝ հակառակը: Հրվելիս թափային ոտքը բարձրացվում է առաջ՝ գործիքից վեր, հրման ոտքը հրվելուց անմիջապես հետո միանում է նրան՝ ներսի ձեռքին հենված (կոնքի տակ): Նժույգի վրայով անցնելիս դրվում է նաև դրսի ձեռքը (կոնքի տակ): Ստացվում է անցողիկ անկյուն՝ հենված զույգ ձեռքին: Մարմինն անկյունով գործիքի վրայից անցնելով՝ ներսի ձեռքը բարձրացվում է՝ ծանրությունը թողնելով դրսի ձեռքին: Գործիքն անցնելուց հետո մարմինն ուղղվում է, իսկ ձեռքը մինչև վերջ մնում է գործիքի վրա: Վերջնական դրությունն է՝ կանգնած կողքով դեպի գործիքը:

Վերցատկ–վարցատկ: Թափավազքից հրվել կամրջակից գործիքի վրա՝ ընդունել հենում կքանիստ և ձեռքերի թափով, ոտքերի հրումով ցատկել վեր՝ առաջ արտակորված:

Ցատկ կողքով: Հրվելով կամրջակից՝ ձեռքերով հենվել բռնակներին և ուղիղ մարմինը բարձրացնել կողմ, գործիքի վրայից անցնել և կանգնել մեջքով դեպի գործիքը: Գործիքից անցնելիս ոտքերի հետ թափով արտակորվել, նույնանուն ձեռքով հրվել և այն բարձրացնել կողմ՝ ծանրությունը տեղափոխել մյուս ձեռքի վրա: Գործիքի վրայից անցնելուց հետո հրվել նաև մյուս ձեռքով, որին հաջորդում է վայրէջքը:

Ցատկ՝ ոտքերը զատած, լայնությանը դրված նժույգի (այծի) վրայից (նկ. 5)

Կատարման տեխնիկան: Թափավազքը և ոտքերի հրունը կամրջակից պետք է լինի ավելի եռանդուն, քան այծի վրայից: Ձեռքերի հրունը հետահար է, հանդիպակաց: Ձեռքերով հրման հետ ոտքերը զատվում են հնարավորին չափ լայն: Մինչև ձեռքերով հրելը կատարվում է ոտքերով հետթափ, ապա մի փոքր կոնքազդրային ծալում և ձեռքերով հրվելիս նորից հետթափ, որը նպաստում է ցատկի բարձրությանը: Ձեռքերով հրումն ավարտվում է մինչև մարմնի անցումը գործիքից: Երկրորդ ճախրման փուլում ոտքերը միացվում են, մարմինն արտակորվում:



Նկար 5. Դպրոցական ծրագրում ընդգրկված հենացատկեր

1. Ցատկ անկյունով , 2.ցատկ անկյունով (թեք թափավազքից), 3. վերցատկ– վարցատկ, 4. ցատկ կողքով, 5. ցատկ ոտքերը զատած:

ԳԼՈՒԽ 2. ԱԶԱՏ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԼԻՐՆԵՐ, ԱԿՐՈՒՄՏԻԿԱԿԱՆ ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԵՆԱՑԱՏԿԵՐ

Այս գլխում, ելնելով հանրակրթական դպրոցի ծրագրից, ըստ դասարանների, կազմվել են ազատ վարժությունների համալիրներ, ակրորատիկական համակցություններ և հենացատկեր:

1-ին դասարան Ազատ վարժություններ (նկ. 6)



ԵԴ՝ հիմնական կանգ.

I

1. Ձեռքերը կողմ,
2. ձեռքերը վեր,
3. կքանիստ՝ ձեռքերն առաջ,
4. կանգնել՝ քայլ աջով կողմ՝ ձեռքերը գոտկատեղին,
5. իրանի դարձում աջ, աջ ձեռքը կողմ, ափը՝ վեր,
6. կանգ՝ զատած ոտքերով, ձեռքերը՝ գոտկատեղին,
7. իրանի դարձում ձախ, ձախ ձեռքը կողմ, ափը՝ վեր,
8. կանգ՝ զատած ոտքերով, ձեռքերը՝ գոտկատեղին:

II

1. թերում ձախ,
2. ուղղվել,
3. թերում աջ,

4. ուղղվել՝ միացնելով աջը, ձեռքերը վեր՝ ասփերով առաջ,
5. հենում կքանիստ,
6. հենում պառկած (1.0 միավոր)^X,
7. նիստ կրունկներից՝ թեքված առաջ, ձեռքերը վեր,
8. ուղղվել՝ կանգ ծնկներից, ձեռքերը՝ կողմ:

III

1. կանգ աջ ծնկից,
2. աջով քայլ կողմ, կանգնել զատած ոտքերով, աղեղներով ցած, ձեռքերը՝ կողմ,
3. արտանկ աջ, ձեռքերը՝ գոտկատեղից,
4. ուղղելով աջը, կանգ զատած ոտքերով, ձեռքերը՝ գոտկատեղից,
5. արտանկ ձախ, ձեռքերը՝ գոտկատեղից,
6. ուղղելով ձախը՝ հենում կանգնած, զատած ոտքերով,
7. ուղղվելով զույգ ոտքի հրունով՝ հենում պառկած,
8. աջ դարձունով հետ, հենում նստած:

IV

1. նիստ ոտքերը ծալած,
2. ուղղել աջը,
3. նիստ անկյունով,
4. պահել (1.0 միավոր)^X,
5. պառկել մեջքից, ձեռքերը վեր,
6. գլորում ձախ (180°), արտակորվել ձեռքերը կողմ,
7. պահել (1.0 միավոր)^X,
8. հենում պառկած՝ ծալված ձեռքերով:

V

1. հենում կքանիստ,
2. կանգնել, բարձրանալով թաթերից, ձեռքերը վեր, հավասարակշռություն,
- 3-4. պահել (1.0 միավոր)^X,
5. իջնել ներբաններից, աղեղներով ներս՝ ձեռքերը կողմ,
6. լողորդի մեկնարկ,
7. ցատկ՝ վեր արտակոր, ձեռքերը վեր՝ դուրս,
„և” վայրէջք (1.0 միավոր)^X,
